ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«31» հոկտեմբերի 2025 թվականի N 05-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 6.1-ին կետը, 11-րդ հոդվածի 3-րդ մասը, 12-րդ հոդվածի 6-րդ մասը, 18-րդ հոդվածի 6-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակում փոփոխություն կատարելուն:

2. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրեր ուժը կորցրած ճանաչելուն և քաղաքացիական ծառայության մի շարք պաշտոնների անձնագրերին:

3. Հաստատել Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2025 թվականի 2-րդ եռամսյակի կատարողականի գնահատականը:

4. Հավանություն տալ ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (համաձայնեցված Կրթության տեսչական մարմնի հետ) «4111 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածում առկա ազատ միջոցներից նվազեցված 20 մլն. ՀՀ դրամը Կրթության տեսչական մարմնի «4111 «Աշխատողների

աշխատավարձեր և հավելավճարներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածին հատկացնելուն:

5. Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի Որակի ապահովման վարչության 2025 թվականի 2-րդ եռամսյակի հաշվետվությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ